# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2024 թվականի N 19-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթներով, միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.2 կետի դրույթները՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր՝ 07-048-0102-0020) հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին) Նոր Գեղի Սուրբ Հովհաննես եկեղեցու սպասարկման համար՝ վանատուն և օժանդակ շինություն կառուցելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված գույքի տրամադրման գործընթացը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -3 Դեմ -9 Ձեռնպահ -1

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՕՁՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**